ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ

REPUBLIC OF ARMENIA
"ARMENIAN ROADS DIRECTORATE" SNCO
DIRECTOR GENERAL

21.01. 2015 թ.
No 218-09/18

ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3 ծածկագրով ընթացակարգի

շրջանակում գրանցված մասնակիցներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայությունները:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է **«ՀԱՃ-ՇՀԾՁԲ-11/3-15/1»:**
Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել Նալբանդյան 28 հասցեով, N14 սենյակ, ոչ ուշ քան 2015թ.-ի փետրվարի 4 -ը, ժամը 11^{00}ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Անահիտ Սարգսյանը:

Հայտերը կբացվեն 2015թ-ի փետրվարի 4 -ին, ժամը 11^{00}ին:

Գնման առարկա է հանդիսանում «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

«Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների բնութագրերը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N1, N2, N3 և N4 հավելվածներում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. Գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք հայտի օրինակելի ձևը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝: ahpiu@netsys.am

Գլխավոր տնօրեն՝ Ա. ԱՐՇԱԿՅԱՆ

Yerevan 375 010, #28 Nalbandyan St. Ереван 375 010, #28 ул. Налбандяна Երևան 375 010, Նալբանդյան փ.28
(37 41) 58 35 32 Fax: (37 41) 562435 E-mail: ahpiu@netsys.am

Նախագիծ

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԱՃ-ՇՀԾՁԲ-11/3-15/1-

«Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. ԱՐՇԱԿՅԱՆԻ, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից և «.....»-ն, ի դեմս Ընկերության տնօրեն .....-ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն) համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների և սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայության մատուցման դեպքում՝

ա) չընդունել Ծառայության արդյունքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև սույն պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել սույն պայմանագրի կատարումից և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողը էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Պայմանագրի խախտումը էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն N 1 հավելվածում սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Մինչև Ծառայության արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.4 Կատարողը պարտավոր է՝
2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:
2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ:
Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 4):
3.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանգրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ---------- (----------) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:
4.2 Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:
4.3 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք սույն պայմանագրի 4.1 կետով նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:
5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:
5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:
5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:
5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել£ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը£ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 30.12.2015թ:
7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:
7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբսահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:
Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:
Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.
7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) և)կամ) վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:
7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
7.6 Սույն պայմանագիրը կազմված է ….. էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3, N4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու	**Կատարող**

Հավելված 1

Տեխնիկական բնութագիր

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ ՏՍ-1(տեխնիկական զննման /դիագնոստիկա/) , ՏՍ-2 (վերանորոգման) ծառայությունների և ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

		Երևան քաղաքում						
NN	**ՏՍ-1, ՏՍ-2 ծառայությունների և ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները**	Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների						
		1 չափաբաժին	2 չափաբաժին	3 չափաբաժին	4 չափաբաժին	5 չափաբաժին	7 չափաբաժին	8 չափաբաժին
		ԳԱԶ, ՌԱՖ, մակնիշի ա/մ	ՎԱԶ, Մոսկվիչ մակնիշի առջևի տանող ա/մ	ՎԱԶ մակնիշի հետևի տանող ա/մ	4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա, ՈՒԱԶ)	5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ	4x4 տիպի ավտոմեքենաներ	Միկրոավտոբուս, մինիվեն տիպի ա/մ
1	2	3	4	5	6	7	8	9
	ՏՍ-1 ներառվող ծառայությունների անվանում	**ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ**				**Այլ պետությունների արտադրության ա/մ**		
1	Բռնկման համակարգի ստուգում							
2	Սառեցման համակարգի ստուգում							
3	Յուղման համակարգի ստուգում							
4	Արտացման համակարգի ստուգում							
5	Կցորդման համակարգի ստուգում							
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում							
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում							
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում							
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում							
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում							
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում							
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում							
13	ABS համակարգի ստուգում							
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում							
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում							
16	Թափքի վիճակի ստուգում							
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների							
	ՏՍ-2 ներառվող ծառայությունների անվանում	**ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ**				**Այլ պետությունների արտադրության ա/մ**		
18	Շարժիչի հանում և տեղադրում							
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում							
20	Նույնը կոնդիցիոների դեպքում							
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում							
22	Շարժիչի վերանորոգում							
23	Նույնը DOHC դեպքում							
24	Նույնը V6-ի դեպքում							
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում							
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում							
27	Նույնը աջի համար (V6)							

28	Նույնը ձախի համար (V6)							
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում							
30	Նույնը աջի համար (V6)							
31	Նույնը ձախի համար (V6)							
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում							
33	Շարժիչի գլխիկիվերանորոգում							
34	Փականի խցուկի փոխարինում							
35	Նույնը V6-ի դեպքում							
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում							
37	Նույնը V6-ի ձախի դեպքում							
38	Նույնը V6-ի աջի դեպքում							
39	Նույնը DOHC դեպքում							
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում							
41	Հրիչների փոխարինում SOHC							
42	Նույնը DOHC դեպքում							
43	Ատամնավոր փոկի փոխարինում							
44	Նույնը DOHC դեպքում							
45	Նույնը V6-ի դեպքում							
46	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում							
47	Նույնը կոնդիցիոների դեպքում							
48	Նույնը DOHC դեպքում							
49	Նույնը կոնդիցիոների դեպքում							
50	Նույնը V6-ի դեպքում							
51	Նույնը կոնդիցիոների դեպքում							
52	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում							
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում							
54	Մխոցային օղակների փոխարինում							
55	Նույնը DOHC դեպքում							
56	Նույնը V6-ի դեպքում							
57	Թափանիվի հանում և տեղադրում							
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ							
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում							
59	Յուղի պոմպի փոխարինում							
60	Նույնը DOHC դեպքում							
61	Նույնը V6-ի դեպքում							
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում							
63	Բռնկման կարգավորում							
64	CO կարգավորում							
65	խարնարակի հանում և տեղադրում							
66	Խարնարակի վերանորոգում							
67	Օդի զտիչի փոխարինում							
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում							
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում							
70	Բենզամղիչի փոխարինում							

71	Վառելիքի զտիչի փոխարինում							
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում							
73	Տրամլյորի հանում և տեղադրում							
74	Տրամլյորի վերանորոգում							
	3. Սառեցման և արտածման համակարգ							
75	Հովհարի փոկի հանում և տեղադրում							
76	Հովհարի հանում և տեղադրում							
77	Ռադիատորի հանում և տեղադրում							
78	Նույնը կոնդիցիոների դեպքում							
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում							
80	Ռադիատորի վերանորոգում							
81	Թերմոստատի փոխարինում							
82	Ջրի պոմպի փոխարինում							
83	Նույնը DOHC և V-6 դեպքում							
84	Նույնը կոնդիցիոների դեպքում							
85	Ջրի պոմպի վերանորոգում							
86	Նույնը DOHC դեպքում							
87	Նույնը կոնդիցիոների դեպքում							
88	Ընդարձակող բաքի փոխարինում							
89	Խլարարի հանում և տեղադրում							
90	Նույնը DOHC դեպքում							
91	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում							
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ							
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում							
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում							
94	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում							
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում							
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում							
97	ՓՏ-ի հանում և տեղադրում							
98	ՓՏ-ի վերանորոգում							
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում							
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում							
101	Վազքաչափի շարժաբերի փոխարինում							
102	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում							
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում							
104	Նույնը V6-ի համար							
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում							
106	Նույնը V6-ի համար							
107	ԱՓՏ-ի վերանորոգում							
108	Նույնը V6-ի համար							
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում							
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ							
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում							

111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով							
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում							
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում							
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով							
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում							
116	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում							
	6. Առջևի և հետևի կամրջակներ							
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում							
118	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում							
119	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում							
120	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում							
121	Կիսասռնու առանցքակալի փոխարինում							
	7. Կախոց							
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում							
123	Տրավերսի հանում և տեղադրում							
124	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում							
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում							
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար							
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում							
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար							
129	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում							
130	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում							
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում							
132	Ձսպանակի հանում և տեղադրում							
133	Ձսպակի հանում և տեղադրում							
134	Ձսպակի վռանների փոխարինում							
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում							
136	Ներքևի լծակի հանում և տեղադրում							
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում							
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում							
139	Միջին ձգանի հանում և տեղադրում							
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում							
141	Վերևի լծակի հանում և տեղադրում							
142	Վերևի լծակի վռանների փոխարինում							
143	Գնդե հոդակապերի փոխարինում							
144	Ծայրակալների հանում և տեղադրում							
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում							

146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում							
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում							
148	Հետևի զսպանակի փոխարինում							
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում							
150	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում							
151	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում							
152	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում							
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում							
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում							
155	Անվաթացքի կարագավորում							
156	Ջոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար							
	8. Ղեկային մեխանիզմ							
157	Ղեկային կալունի հանում և տեղադրում							
158	Նույնը V6-ի համար							
159	Ղեկային կալունի վերանորոգում							
160	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում							
161	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում							
162	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում							
163	Նույնը DOHC դեպքում							
164	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում							
165	Նույնը DOHC դեպքում							
166	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում							
167	Նույնը DOHC դեպքում							
168	Նույնը կոնդիցիոների դեպքում							
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում							
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում							
	9. Արգելակային համակարգ							
171	Գլխ. գլանի հանում և տեղադրում							
172	Գլխ. գլանի վերանորոգում							
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում							
174	Բանվ. գլանի հանում և տեղադրում							
175	Բանվ. գլանի վերանորոգում							
176	Արգելակային համակարգի օդահանում							
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում							
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում							
179	Առջևի սուպպորտի վերանորոգում							
180	Հետևի սուպպորտի վերանորոգում							
181	Արգելակային փողրակի փոխարինում							
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում							
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում							
184	Հետևի կոճղակների փոխարինում							
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում							
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում							
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում							

188	ABS-ի հանում և տեղադրում							
189	ABS-ի վերանորոգում							
190	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում							
191	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում							
	10. Էլեկտրասարքավորում							
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում							
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում							
194	Գեներատորի հանում և տեղադրում							
195	Նույնը V6-ի դեպքում							
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում							
197	Գեներատորի վերանորոգում							
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում							
199	Մեկնարկիչի վերանորոգում							
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում							
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում							
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում							
203	Վազքաչափի հանում և տեղադրում							
204	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում							
205	Սարքերի պանելի հանում և տեղադրում							
206	Արագաչափի հանում և տեղադրում							
207	Ազդանշանի հանում և տեղադրում							
208	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում							
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում							
210	Ազդանշաային համակարգի տեղադրում							
211	Մագնիտոլայի տեղադրում							
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում							
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում							
214	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում							
215	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում							
216	Էլեկտրական տվիչների փոխարինում							
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում							
218	Վառոցքի մոմերի փոխարինում							
219	Կոնդիցիոների լիցքավորում							
220	Կոնդիցիոների վերանորոգում							
	11. Այլ ծառայություններ							
221	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում							
222	Ավտոմեքենայի լվացում							
223	Անիվի հանում և տեղադրում							
224	Անվադողի վերանորոգում							
225	Անիվի բալանսավորում							
226	Անիվի վալց							

227	CO-զոդման աշխատանքներ,գին 1 քառ.սմ - ի համար							
228	Խառատային աշխատանքներ							
229	Փականագործի աշխատանքներ							
230	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար							
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	ԳԱԶ, ՌԱՖ, մակնիշի ա/մ	ՎԱԶ, Մոսկվիչ մակնիշի առջևի տանող ա/մ	ՎԱԶ մակնիշի հետևի տանող ա/մ	4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա,ՈՒԱԶ)	5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ	4x4 տիպի ավտոմեքենաներ	Միկրոավտոբուս, մինիվեն տիպի ա/մ
	1.Շարժիչ	**ԱՊՀ արտադրության ավտոմեքենաներ**				**Այլ պետությունների արտադրության ա/մ**		
1	Շարժիչի բլոկ							
2	Շարժիչի գլխիկ							
3	Բարձիկ							
4	Շարժիչի գլխիկի միջադիր							
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ							
6	Շարժիչի լաշխիչ լիսեռ							
7	Շարժիչի փական դուրս մղող							
8	Շարժիչի փական ներս մղող							
9	Շարժիչի փականի խցուկ							
10	Ծնկաձև լիսեռ							
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի							
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի							
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ							
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ							
15	Հենակային տափողակ							
16	Մխոց							
17	Մխոցային օղակներ							
18	Ատամնանիվ							
19	Ատամնավոր փոկ							
20	Շղթա							
21	Հիդրոձգան							
22	Հրիչ							
23	Հիդրոհրիչ							
24	Բաշմակ							
25	Հանգստարար							
26	Թափանիվ							
27	Թափանիվի պսակ							
28	Խցուկ լաշխիչ լիսեռի							
29	Շկիվ							
30	Շարժաթև							
31	Կարտերի միջադիր							
32	Միջադիր							
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ							
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր							

34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր							
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր							
36	Յուղի զտիչ							
37	Յուղի պոմպ							
38	Յուղի պոմպի շարժաբեր							
39	Յուղի ռադիատոր							
40	Յուղի փողրակ							
41	Յուղի ծորակ							
42	Վառոցքի մոմ							
43	Բենզոլաք							
44	Խառնարակ							
45	Խառնարակի վերանորոգման հավաքածու							
46	Ինժեկտորի ֆորսունկա							
47	Վառելանյութի մղիչ էլեկտրական							
48	Վառելանյութի մղիչ մեխանիկական							
49	Վառելանյութի զտիչ							
50	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման							
51	Վառելանյութի փողրակ							
52	Աքսելերատորի ճոպան							
53	Օդի զտիչ							
54	Ջերմաստիճանային տվիչ							
55	Յուղի տվիչ							
56	Բաշխիչ լիսեռի տվիչ							
57	Օդի ծախսի տվիչ							
58	Արագաչափի տվիչ							
59	Հովհարի տվիչ							
60	Ջրի տվիչ							
61	Բենզոլաքի տվիչ							
62	Մարման ընթացքի կարգավորիչ							
63	Մարման ընթացքի տվիչ							
64	Ղեկավարման համակարգիչ							
65	Պարապ ընթացքի տվիչ							
66	Դրոսելային փականի տվիչ							
67	Թթվածնի տվիչ							
	3. Սառեցման և արտածման համակարգ							
68	Հովհարի փոկ							
69	Հովհար							
70	Ռադիատոր							
71	Ընդարձակող լաք							
72	Ռադիատորի փողրակ							
73	Թերմոստատ							
74	Ջրի պոմպ							
75	Ջրի պոմպի առանցքակալ							
76	Ջրի պոմպի թևակ							

77	Սառեցման հեղուկ 1 լիտր							
78	Ջրի պոմպի սռնանիվ							
79	Հոլովակ							
80	Փոկ							
81	Փոկ կոնդիցիոների							
82	Ծորակ							
83	Խլարարի ներդիր							
84	Խլարարի կախոց							
85	Կրոնշտեյն							
86	Անուր (Խամուտ)							
87	Խլարար							
88	Ռեզոնատոր							
89	Վառարանի ռադիատոր							
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ							
90	Կցորդման լանվորական գլան							
91	Կցորդման գլխավոր գլան							
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու							
93	Կցորդման տանող սկավառակ							
94	Կցորդման տարվող սկավառակ							
95	Կցորդման առանցքակալ							
96	Կցորդման փողրակ							
97	Փոխանցման տուփ							
98	ՓՏ-ի առջևի խցուկ							
99	ՓՏ-ի հետևի խցուկ							
100	ՓՏ-ի առանցքակալ							
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ							
102	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ							
103	ՓՏ-ի եղանիկ							
104	ՓՏ-ի ատամնանիվ							
105	Համաժամիչ							
106	Մուֆտ							
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ							
108	ԱՓՏ-ի զտիչ							
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու							
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ							
111	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր							
112	ԱՓՏ յուղ, 1 լիտր							
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ							
114	Հերմետիկ							
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ							
115	Բաշխիչ տուփ							
116	Բաշխիչ տուփի խցուկ							
117	Բաշխիչ տուփի առանցքակալ							
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ							

119	Բաշխիչ տուփի լիսեռ							
120	Կարդանային լիսեռ							
121	Էլաստիկ մուֆտ							
122	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ							
123	Կարդանային լիսեռի խաչուկ							
	6. Առջևի և հետևի կամրջակներ							
124	Հետևի կամ առջևի կամրջակ							
125	Ռեդուկտոր							
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ							
127	Դիֆֆերենցիալ							
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ							
129	Տանող ատամնանիվի խցուկ							
130	Տանող ատամնանիվի առանցքակալ							
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ							
132	Կիսասռնի							
133	Կիսասռնու առանցքակալ							
134	Կիսասռնու միջադիր							
135	Կիսասռնու խցուկ							
136	Կարգավորիչ տափողակ							
	7. Կախոց							
137	Տրավերս							
138	Կրոնշտեյն							
139	Ձախ կամ աջ հոդակապ							
140	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց							
141	Անվակունդ							
142	Անվակունդի խցուկ							
143	Անվակունդի ներքին առանցքակալ							
144	Անվակունդի արտաքին առանցքակալ							
145	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ							
146	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ							
147	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ							
148	Հարվածամեղմիչի թասակ							
149	Ձսպանակ							
150	Առջևի հարվածամեղմիչ							
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց							
152	Հարվածամեղմիչի վռան							
153	Ներքևի լծակ							
154	Ներքևի լծակի վռան							
155	Վերևի լծակ							
156	Վերևի լծակի վռան							
157	Գնդե հոդակապ							
158	Առջևի կայունարար							
159	Առջևի կայունարարի վռան							
160	Առջևի կայունարարի առջևի վռան							

161	Հետևի զսպանակ							
162	Հետևի ցնցամեղմիչ							
163	Հետևի մետաղածող (շտանգա)							
164	Հետևի մետաղածողի (շտանգա) վռան							
165	Հետևի անկյունագծային լծակ							
166	Անկյունագծային լծակի վռան							
167	Զսպակ (ռեսսորա)							
168	Զսպակի վռան							
169	Զսպակի միջադիր							
170	Զսպակի բռնիչ							
171	Աջ կամ ձախ ձգան							
172	Ծայրակալ							
173	Ձգան մեջտեղի							
174	Անվահեծ							
	8. Ղեկային մեխանիզմ							
175	Ղեկային կալուն							
176	Ղեկային կալունի առանցքակալ							
177	Ղեկային կալունի խաչուկ							
178	Հիդրոուժեղարար							
179	Հիդրոուժեղարարի փոկ							
180	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ							
181	Հիդրոուժեղարարի պոմպ							
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ							
183	Ղեկային ձող							
184	Ղեկային ձողի ծայրակալ							
185	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր							
186	Ճոճանակ							
187	Ճոճանակի վռան							
	7. Արգելակային համակարգ							
188	Գլխ. գլան							
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ							
190	Վակուումային ուժեղարար							
191	Բանվ. գլան							
192	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ							
193	Արգելակային փողրակ							
194	Սուպպորտի ուղղորդիչ							
195	Սուպպորտի մանժետ							
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ							
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ							
198	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ							
199	Առջևի արգելակային սկավառակ							
200	Հետևի արգելակային սկավառակ							
201	Ձեռքի արգելակի ճոպան							

202	ABS-ի տվիչ							
203	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ							
204	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ							
205	Ձեռքի արգելակի ճոպան							
	9. Էլեկտրասարքավորում							
206	Գեներատոր							
207	Գեներատորի դիոդային կամրջակ							
208	Գեներատորի ռելե							
209	Գեներատորի առանցքակալ							
210	Ստարտեր							
211	Ստարտերի ռելե							
212	Ստարտերի ածուխ							
213	Բենդեքս							
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)							
215	Առջևի լապտեր							
216	Առջևի թարթիչ							
217	Հետևի լապտեր							
218	Հետևի թարթիչ							
219	Արգելակային լապտեր							
220	Լամպ							
221	էլեկտրական անջատիչ							
222	էլեկտրական տվիչ							
223	էլեկտրական չափիչ սարք							
224	Բռնկման կողպեք							
225	էլեկտրալարերի գլխավոր խուրց							
226	էլեկտրալարերի երկրորդային խուրց							
227	Վառոցքային լարերի խուրց							
228	Վառոցքի մոմի ծայրակալ							
229	Վազքաչափ							
230	Վազքաչափի ճոպան							
231	Արագաչափ							
232	Ազդանշան							
233	Ապակելվացիչ							
234	Ապակելվացիչի շարժիչ							
235	Դռների կենտրոնական փական							
236	Ազդանշանային համակարգ							
237	Մագնիտոլա							
238	էլեկտրամբարձիչ							
239	էլեկտրամբարձիչի շարժիչ							
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորգման							

*Մգեցված վանդակները ծառայության տեսակ չեն համարվում

Հավելված 2

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ **ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն**

Հիմնարկի անվանումը **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ** /ՀՀ դրամ/

Չափաբաժին	Գնման ենթակա ծառայությունների անվանումը		2015 թ. նախատեսվում է գնել								Ընդամենը	
	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում	Միավորի նախահաշվային գինը /դրամ/	I եռ.		II եռ.		III եռ.		IV եռ.			
			քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	**ԳԱԶ, ՌԱՖ, մակնիշի ա/մ** Գազել պ/հ 785LS64		1				1		1		3	
2	**ՎԱԶ, Մոսկվիչ մակնիշի առջևի տանող ա/մ** ՎԱԶ 2115 պ/հ 273LO64, ՎԱԶ 21150 պ/հ 193LU64, ՎԱԶ 21150 պ/հ 192LU64, ՎԱԶ 21150 պ/հ 317LU64, ՎԱԶ 21150 պ/հ 313LU64, ՎԱԶ 21150 պ/հ 316LU64, ՎԱԶ 21150 պ/հ 409 LL11		3		5				4		12	
3	**ՎԱԶ մակնիշի հետևի տանող ա/մ** ՎԱԶ 2107 պ/հ 781LO64				3				4		7	
4	**4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա, ՈՒԱԶ)** ՎԱԶ 21214 պ/հ 982OU64, ՎԱԶ 21214 պ/հ 555LS64, Շևրոլե-Նիվա պ/հ 981OU64, ՎԱԶ 21214 պ/հ 351LU64				2		1		1		4	
5	**5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ** Samand LX պ/հ 969LL10 , Samand LX պ/հ 004UO02, Ֆիատ-լինեա պ/հ 084OU64, Ֆիատ-բրավո պ/հ 154OU64, Ֆիատ-լինեա պ/հ 153OU64, Ֆիատ-լինեա պ/հ 152OU64, Nissan Altima պ/հ 071LL11, Ֆիատ-բռավո պ/հ 265OO63		2		2		1		2		7	
7	**4x4 տիպի ավտոմեքենաներ** Հովեռ պ/հ 101LL55, Միցուբիշի պ/հ 066LL01 Nissan Pathfinder պ/հ 101OO55		1				1		2		4	
8	**Միկրոավտոբուս, մինիվեն տիպի ա/մ** HYUNDAI պ/հ 694 LO 64, Nissan urvan պ/հ 449 LU64						1				1	
Ընդամենը՝			**7**		**12**		**5**		**14**		**38**	

Հավելված 3

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախարարության, գերատեսչության, պետական
կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ **ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն**

Հիմնարկի անվանումը **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ** /ՀՀ դրամ/

Չափաբաժին	Գնման ենթակա ծառայությունների անվանումը		2015թ. նախատեսվում է ֆինանսավորել «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի միջոցներից			
	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում	Ընդամենը տարեկան /դրամ/	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.
1	2	3				
1	**ԳԱԶ, ՌԱՖ, մակնիշի ա/մ** Գազել պ/հ 785LS64	100%	100%	100%	100%	100%
2	**ՎԱԶ, Մոսկվիչ մակնիշի առջևի տանող ա/մ** ՎԱԶ 2115 պ/հ 273LO64, ՎԱԶ 21150 պ/հ 193LU64, ՎԱԶ 21150 պ/հ 192LU64, ՎԱԶ 21150 պ/հ 317LU64, ՎԱԶ 21150 պ/հ 313LU64, ՎԱԶ 21150 պ/հ 316LU64, ՎԱԶ 21150 պ/հ 409 LL11	100%	100%	100%	100%	100%
3	**ՎԱԶ մակնիշի հետևի տանող ա/մ** ՎԱԶ 2107 պ/հ 781LO64	100%	100%	100%	100%	100%
4	**4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա, ՈՒԱԶ)** ՎԱԶ 21214 պ/հ 982OU64, ՎԱԶ 21214 պ/հ 555LS64, Շևրոլե-Նիվա պ/հ 981OU64, ՎԱԶ 21214 պ/հ 351LU64	100%	100%	100%	100%	100%
5	**5-տեղանոց մարդատար առջևի տանող ա/մ** Samand LX պ/հ 969LL10 , Samand LX պ/հ 004UO02, Ֆիատ-լինեա պ/հ 084OU64, Ֆիատ-բրավո պ/հ 154OU64, Ֆիատ-լինեա պ/հ 153OU64, Ֆիատ-լինեա պ/հ 152OU64, Nissan Altima պ/հ 071LL11, Ֆիատ-բռավո պ/հ 265OO63	100%	100%	100%	100%	100%
7	**4x4 տիպի ավտոմեքենաներ** Հովեռ պ/հ 101LL55, Միցուբիշի պ/հ 066LL01 Nissan Pathfinder պ/հ 101OO55	100%	100%	100%	100%	100%
8	**Միկրոավտոբուս, մինիվեն տիպի ա/մ** HYUNDAI պ/հ 694 LO 64, Nissan urvan պ/հ 449 LU64	100%	100%	100%	100%	100%
Ընդամենը՝		100%		100%	100%	100%

Հավելված 4

Պատվիրատու	Կատարող
----------	----------
----------	----------
----------	----------
հասցե ----------	հասցե ----------
հհ ----------	հհ ----------
----------	----------
հվհհ ----------	հվհհ ----------

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» .....2014թ.

Պայմանագրի անվանումը՝ «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխսպասարկման ծառայությունների ձեռքբերման գլխավոր գնման պայմանագիր:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__ » …….. 2015թ.
(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)
Պայմանագրի համարը՝ _____
(Համաձայնագրի համարը)_
Պատվիրատուն, ի դեմս ----------և Կատարողը՝ ի դեմս_----
----------, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի (Համաձայնագրի) կատարման վերաբերյալ «___» «_____» 20--թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով (Համաձայնագրով) ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Կատարողը «__» «_____» 20--—թ-ից «__» «_____» 20--թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

Ծառայության համառոտ նկարագիրը	Ծառայության քանակական ցուցանիշները	Ծառայության ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------	----------	----------

Վերոհիշյալ ծառայությունների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը կատարեց	Ծառայությունը ընդունեց
----------	----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն_____	ազգանուն_____

Հավելված 5

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«ՀԱՃ-ՇՀԾՁԲ-11/3-15/1-» ծածկագրով
Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԴԻՄՈՒՄ
ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

---------- հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգիմասնակցիանվանումը (անունը)

«Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից «ՀԱՃ-ՇՀԾՁԲ-11/3-15/1-» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի .....
(չափաբաժինների) համարը

չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ի էլեկտրոնայինին փոստի հասցեն է՝
Մասնակցիէլեկտրոնայինփոստիհասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

N «ՀԱՃ-ՇՀԾՁԲ-11/3-15/1» ծածկագրով
Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N «ՀԱՃ-ՇՀԾՁԲ-11/3-15/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ---------- -ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ապրանքիանվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	«չափաբաժնի անվանումը- հավելված N1»			
2	«չափաբաժնի անվանումը- հավելված N1»			
3	«չափաբաժնի անվանումը- հավելված N1»			
…	…			
8	«չափաբաժնի անվանումը- հավելված N1»			

3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____20 թ.
(ամսաթիվը, ամիսը)